ՄԻՊ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

Դեկտեմբերի 1, 2021թ.

Համակարգող խորհրդի նիստը մեկնարկել է ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ, Համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի բացման խոսքով:

Իր խոսքում նախարարի առաջին տեղակալը ողջունել է Խորհրդի անդամներին, ինչպես նաև Խորհրդի կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Տիկին Գրիգորյանն անդրադարձել է Խորհրդի գործունեությանը, ՄԻՊ ռազմավարությամբ և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագրով (այսուհետ միասին ռազմավարական փաստաթղթեր) նախատեսված միջոցառումների կատարման ընթացքին: Վերջինս նաև ներկայացրել է կազմակերպական հարցերը, նշել, որ e-rights հարթակի տեխնիկական խնդիրները լուծված կլինեն սույն շաբաթվա վերջին և հիշեցրել մինչև հունվարի 10-ը ՄԻՊ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացման անհրաժեշտությունը:

Տիկին Գրիգորյանն իր երախտագիտությունն է հայտնել Շվեդիայի դեսպանության ներկայացուցիչ Իզաբելա Էրիկսոնին և RWI Եվրոպայի գրասենյակի տնօրեն Զուզանա Զալանովային:

Այնուհետև Շվեդիայի դեսպանության ներկայացուցիչ Իզաբելա Էրիկսոնը և RWI Եվրոպայի գրասենյակի տնօրեն Զուզանա Զալանովան իրենց խոսքում

պատրաստակամություն են հայտնել աջակցելու Հայաստանում մարդու իրավունքների զարգացմանը.

Տիկին Գրիգորյանը ներկայացրել է նաև նիստի օրակարգը, այն է.

1. ՄԻՊ ԳԾ 2021թ. երկրորդ կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:
2. Հարց ու պատասխան:
3. ՄԻՊ ԳԾ- 2022թ. ձեռնարկվող քայլերի ներկայացում:

Օրակարգի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ Աննա Կարապետյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ Քրիստինա Հովհաննիսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյան ներկայացրել են 2021թ. երկրորդ կիսամյակում կատարված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Այնուհետև տիկին Գրիգորյանը հարթակ է տրամադրել հարց ու պատասխանի համար:

Կանանց ռեսուրսային կենտրոնի ներկայացուցիչ Աննա Հովհաննիսյանը հարց է ուղղել ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցչին ընտանեկան բռնության քրեականացման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին,թե ինչու ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում տեղ չգտան ԸԲ քրեականացմանն ուղղված հոդվածներ, այնուհետև վերջինս հարց է ուղղել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցչին աշխատանքային օրենսդրության կատարելագործման վերաբերյալ, թե արդյոք աշխատանքներ տարվում են Աշխատանքի Միջազգային Կազմակերպության կողմից 2019թ. հունիսին ընդունված «Աշխատանքում բռնության և ոտնձգության վերացնելու մասին» կոնվենցիայի վավերացման ուղղությամբ:

Եվրասիա համագործակցության հիմնադրամի ներկայացուցիչ Նիկոլայ Հովհաննիսյանը իր դրական արձագանքն է ներկայացրել մի շարք օրենքներում

կրոնի ազատության իրավունքի արտացոլման կապակցությամբ, և հույս հայտնել, որ վերջին երկու օրենքներում ևս այդ փոփոխությունները տեղ կգտնեն: Նաև վերջինս խնդրել է ներկայացնել, թե ինչ տեսլական ունի ՀՀ արդարադատության նախարարությունը «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ և թե ինչ փուլում է «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը:

Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների հասարակական կազմակերպության իրավաբան Նինա Հակոբյանը առաջարկել է վերապատրաստումներ անցկացնելիս թիրախավորել դատավորներին և լրագրողներին, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հարց է ուղղել բժշկասոցիալական հանձնաժողովներում աշխատողների վերապատրաստումների վերաբերյալ:

Տիկին Քրիստիննե Գրիգորյանը, ի պատասխան վերոշարադրյալ հարցերին նշել է, որ կրոնական ազատությունների ապահովմանն ուղղված ոստիկանական համակարգի փոփոխությունները կատարվելու են ներքին գործերի նախարարության ստեղծմանը միտված օրենսդրական փաթեթում, որտեղ կարգավորումները նախատեսված են: Ինչ վերաբերում է «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծին, տիկին Գրիգորյանը նշել է, որ նախագծում համապատասխան փոփոխություններ են իրականացվել ատելության խոսքի վերաբերյալ իրավակարգավորումների ներառման նպատակով և այժմ նախագիծը լրամշակման փուլում է:

Պատասխանելով ԸԲ քրեականացմանը վերաբերող հարցին, տիկին Գրիգորյանը նշել է, որ անգամ նոր քրեական օրենսդրության ընդունմամբ չեն համարում, որ հարցը փակված է և քննարկումները ու հարցի զգայունացումը շարունակելու են անել:

Այնուհետև հարցերին պատասխանել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ Քրիստինա Հովհաննիսյանը:

Մասնավորապես նա հայտնել է, որ ԱՍՀՆ-ն տեղյակ է հանձնաժողովների աշխատանքի թերի լինելու մասին և ներկայացրել բժշկասոցիալական հանձնաժողովներում անձի ֆունկցիոնալության գնահատման նոր մոդելի ներդրմանն առնչվող մանրամասները, իսկ ինչ վերաբերում է աշխատանքային օրենսդրության կատարելագործմանը, նախարարության ներկայացուցիչը նշել է, որ կերակրող կամ մինչև 2 տարեկան երեխա ունեցող մայրերի աշխատաժամանակի բարելավմանն ուղղված փոփոխություններ են կատարվելու:

Հաջորդիվ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Սյուզանա Սողոմոնյանը և ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արմեն Նազարյանը նույնպես ներկայացրել են ՄԻՊԳԾ 2021թ. երկրորդ կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արդարադատության ոլորտում քրեական և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար Արտյոմ Սեդրակյանը արձանագրել է ծավալվող քննարկման արդյունավետությունը, նշել որ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման համար անհրաժեշտ են փոխզիջումներ, և որ ավելի լավ է ունենալ թեկուզ ոչ առավելագույն ցանկացած կարգավորրումներով օրենք, քան ոչ մի բան: Նա նաև շնորհակալություն է հայտնել ՀՀ պաշտպանության նախարարությանն արդյունավետ աշխատանքի համար, առաջարկել գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումը կատարելուց հետո հետևողականորեն շարունակել դրա իրագործումը այլ ոլորտներում:

Կանանց ռեսուրսային կենտրոնի ներկայացուցիչ Աննա Հովհաննիսյանը հարց է ուղղել ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ արդարադատության ակադեմիայի ներկայացուցիչներին վերապատրաստումների արդյունավետության գնահատման մեթոդաբանության վերաբերյալ:

Տիկին Գրիգորյանն անդրադարձել է գնահատման մեթոդաբանության արդյունավետության բարձրացման կարևորությունը, առաջարկել մշակել

արդյունավետ մեխանիզմ և ՄԻՊ ԳԾ հաջորդ շրջափուլին ներկայացնել առաջարկների տեսքով, իսկ ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչ Միեր Մկրտչյանը ներկայացրել է դատախազների վերապատրաստումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը:

Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների հասարակական կազմակերպության իրավաբանը հարց է ուղղել ՀՀ առողջապահության նախարարի տեղակալին առողջապահության ոլորտում ընդունվող նորմատիվ և անհատական իրավական ակտերի մեթոդաբանության վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարի տեղակալը նշել է, որ Առողջապահության նախարարությունը բաց է համագործակցության համար:

Նիստի ավարտին Տիկին Գրիգորյանը շնորհակալություն է հայտնել պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ակտիվ մասնակցության համար, և հայտնել, որ հաջորդ հանդիպումը տեղի կունենա 2022 թվականի հունվարին:

Համակարգող խորհրդի նախագահի տեղակալ՝

Քրիստիննե Գրիգորյան

03.12.2021թ.